ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 2, 1962 Общественные науки

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԵՐՈՒՄ

Вопросы ЛИТЕРАТУРЫ

«Նորը կյանքում և նորը գրականության մեջ» բաժնում ամսագիրն այս տարվա իր առաջին համարում հրապարակել է գրողների և արվեստի գործիչների ելույթներ՝ նվիրված սովետական գրականության արդի խնդիրների, կյանքի և գրականության սերտ կապի, ստեղծագործողների նորարարության հարցերին:

Անդրադառնալով գրականության և արվեստի հարցերի մասին ՍՄԿՊ-ի նոր Ծրագրում առաջ քաշված դրույթներին և հենվելով ՍՄԿՊ XXII համագումարի նյութերի վրա, ելույթ ունեցողները (Ալ. Սուրկով, Վ. Պերցով, Ի. Սելվինսկի, Գ. Սեիդբեյլի, Դ. Գորա, Բ. Եֆիմով) բացահայտում են գրականության հուզող հարցերը, ընդգծում ընթերցողների օր-ավուր աճող պահանջները, իրենց գլխավոր խնդիրը համարում այդ պահանջների բավարարումը:

Իրականության հարատության արտացոլման հարցին է նվիրված Վ. Շչերբինայի հոդվածը: Խոսելով կոմունիստական էրայում ապրող նոր մարդու, գրականության նոր նպատակների, նոր խնդիրների մասին և դրան համապատասխան գրողի դիրքորոշման մասին, նա ընդգծում է գրողի դերի պատասխանատվությունը: Արվեստի գլխավոր ճանապարհը Շչերբինան համարում է «սուբյեկտիվ և օբյեկտիվ սկզբունքների օրգանական միաձյուսումը»:

«Մնունդ առնող արվեստը» խորագրով հոդվածը լուրջ և արժեքավոր դիտողություններ է պարունակում հեղուստատեսային հաղորդումների մասին: Հոդվածագիր Լ. Սապպակը հանգամանորեն քննության է առնում հեղուստատեսության արդի վիճակը, դատապարտում է պայմանական, շինծու, բռնազբոսիկ հաղորդումները: «Հեղուստացույցի էկրանը,— ասում է հեղինակը,— այն բարձր տրիբունան է, որ ստեղծել է ժամանակակից հասարակությունը պոետի, արտիստի, գիտնականի, քաղաքական գործչի համար»: Նա որպես հեղուստադիտող պահանջում է, որ այնտեղից տրվող հաղորդումը, այնտեղից հնչող ձայնը լինի ջերմ, անմիջական, համոզիչ:

Յու. Կոժևնիկովի հոդվածը նվիրված է անցյալի ժառանգության շուրջը մոլդավական մամուլում ծավալված բանավեճին: Փորձելով տալ բանավեճի ընթացքում քննարկված հարցերի ընդհանուր նկարագիրը, Կոժևնիկովը բացատրում է այն պատճառները, որոնք խանգարել են մոլդավական ժողովրդի գրական ժառանգության լուրջ և օբյեկտիվ գնահատմանը: Ապա հոդվածագիրը նշելով այն հարցերը, որոնք դեռևս կարոտ են լուսաբանման ու ճշտման, առաջարկում է շարունակել բանավեճը:

Գրողի վարպետությունը բաժնում հանդես են եկել Վ. Իվանովը «Գրողը և արդիականությունը», Վլ. Լիդինը «Հուշատետրի էջերից», Ի. Սոզոնովան «Մարդը և պատմության ընթացքը» հոդվածներով:

Հետաքրքրական նյութեր է պարունակում հատկապես Լիդինի հոդվածը: Սոզոնովայի հոդվածը վերաբերում է Շոլոխովի «Խաղաղ Դոն» վեպին:

Գրախոսությունների բաժնում զետեղված է Էր. Խանպիրայի գրախոսականը Բ. Տիմոֆեևվի «Ճի՞շտ ենք արդյոք խոսում» գրքի վերաբերյալ: Նշելով մի քանի լուրջ թերություններ և վիճելի դրույթներ, գրախոսագիրը գիրքը համարում է օգտակար և հետաքրքիր աշխատություն, որ արժանի է ջերմ ընդունելության:

Ամսագրի այս համարում գրախոսություններ են լույս տեսել Կ. Կուրովայի «Իվան Շուխով», Լ. Օսպովատի «Պարլո Ներուդա» մենագրությունների մասին, Յու. Իվակինի «Շևչենկոյի ստատիրան», «Շևչենկոյի քաղաքական պոեզիայի ոճը» ուկրաիներեն լույս տեսած գրքերի, Վ. Ֆանասևի «Ա. Ի. Կուպրին» ակնարկի, ինչպես նաև Լատվիական ՍՍՌ Լեզվի և գրականության ինստիտուտի գիտական աշխատությունների ժողովածուի և այլ գրքերի մասին:

Ամսագրում տրված է համառոտագրություն «Ա. Խաչակյանը ռուսական քննադատության մեջ» ուշագրավ ժողովածուի մասին: Հրապարակված են տեղեկություններ Վ. Վելչևի «Տուրգենևը Բուլգարիայում» գրքի, Ն. Մազեպայի «Բարատինսկի» աշխատության մասին, ուր շոշափված են Բարատինսկու գրական-քննադատական հայացքները:

Ամսագրում տեղ են գտել նաև հետաքրքիր ֆելիետոններ, պարոդիաներ, էպիգրամներ, «Գրադի բլոկնոտից» բաժիներ:

Ս. ԱՎԱԳՅԱՆ

Вопросы истории

Ամսագրի 1962 թ. առաջին համարի «Սովետական պատմաբաններ գիտության խնդիրներ քննում են XXII համագումարի լույսի տակ» վերնագրով առաջնորդող հոդվածում ամփոփված են ՍՍՌՄ ԳԱ Պատմական գիտությունների բաժանմունքի 1961 թ. նոյեմբերի 17--18-ը տեղի ունեցած ընդհանուր ժողովի արդյունքները:

Ընդհանուր ժողովը նվիրված էր ՍՄԿՊ XXII համագումարի լույսով սովետական պատմագիտության խնդիրներին, այն միջոցների ու եղանակների ի հայտ բերմանն ու մշակմանը, որոնք անհրաժեշտ են սովետական պատմաբանների առջև ՍՄԿՊ Ծրագրով դրված խնդիրները հաջողությամբ լուծելու համար: Թե՛ զեկուցողները և բե՛ելույթ ունեցողները նշել են, որ պատմաբանները պետք է իրենց ուշադրությունը սևեռեն սովետական հասարակության պատմության, սովետական ժողովրդի պատմության ուսումնասիրության վրա, առանձնահատուկ տեղ հատկացնելով պատմության այն ժամանակաշրջանին, որի սկիզբը դրեց ՍՄԿՊ XX համագումարը:

Պատմական գիտությունների բաժանմունքի ընդհանուր ժողովում մեծ տեղ է գրավել այն հարցը, թե ինչպիսի հսկայական վնաս է հասցրել անհատի պաշտամունքը հասարակական գիտությունների զարգացմանը և ինչ մեծ աշխատանք պետք է կատարել՝ գիտությունների այդ բնագավառից անցյալի բոլոր բացասական հետևանքները վերջնականապես վերացնելու համար: Առձեռնելով անհատի պաշտամունքի վնասակար հետևանքների հարցը, ելույթ ունեցողները մի շարք կոնկրետ օրինակներով ցույց են տվել Ստալինի կողմից շատ իրադարձությունների ու երևույթների սուբյեկտիվ գնահատման, լենինյան ցուցումներից նահանջելու, մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատությունները նսեմացնելու բազմաթիվ փաստեր: Ա. Վ. Արցիխովսկին իր ելույթում նշել է, որ ֆեոդալիզմի դարաշրջանի պատմության բնագավառում ստեղծվել էր Իվան Ահեղի անձի պաշտամունք, իդեալականացվում էր նրա բաղամականությունը չնայած, որ այդ բաղամականությունն ունեցավ ողբալի հետևանքներ:

Ժողովում անդրադարձել են սովետական այն պատմաբանների գիտական ժառանգության օգտագործման հարցին, որոնք անհատի պաշտամունքի ժամանակ անհիմն մեղադրանքների զոհ են դարձել: Քննարկման առարկա է եղել նաև այն հարցը, թե ինչպես պետք է կազմակերպվի սովետական պատմաբանների աշխատանքը, որպեսզի հաջողությամբ լուծվեն ՍՄԿՊ XXII համագումարի առաջադրած խնդիրները:

Այս առնչությամբ ընդգծվել է գիտական խորհուրդների կարևոր դերը, որոնք պետք է ծավալեն ընկերական ազատ բանավեճեր, մշավոնեն գիտությունների ակադեմիայի սիստեմում և բուհերում աշխատող գիտական կոլեկտիվների և առանձին հետազոտողների ջանքերը:

Քննարկելով պատմաբանների գիտական կադրեր պատրաստելու հարցը, նշվել է, որ առանձնապես մեծ ուշադրություն պետք է դարձվի բարձրագույն գիտական կադրերի՝ դոկտորների պատրաստմանը, ընդսմին չնվազեցնելով պահանջկոտությունը, դյուրացվի դոկտորական դիսերտացիաների պաշտպանության պրոցեդուրան: Պետք է հրաժարվել այն տուգդիցիայից, որ իբրև դոկտորական դիսերտացիա ներկայացվում են անպայման հաստափոր աշխատություններ: Իբրև այդպիսին, հաճախ կարելի է ներկայացնել նաև մեծ արժեք ունեցող և գիտական հասարակության ճանաչմանն արժանացած առանձին հետաքրքրական հոդվածներ, կամ կոլեկտիվ աշխատությունների առանձին գլուխներ:

Ժողովում ընդունված բանաձևում նշված է, որ սովետական պատմաբանների սրբազան պարտականությունն է անճաշտ պայքար մղել պատմության բուրժուական կեղծարարների դեմ, ռեֆորմիզմի, ռևիզիոնիզմի ու դոգմատիզմի դեմ: Բանաձևի վերջում խոսվում է գիտական կադրերի օգտագործման ու պատրաստման աշխատանքը արմատապես բարելավելու մասին: Անհրաժեշտ է ճիշտ մոտեցում և հոգատար վերաբերմունք հանդես բերել բարձրագույն մասնագետների նկատմամբ, բայց չտալ, որ նրանք ծանրաբեռնվեն գիտա-կազմակերպական աշխատանքով, այդ աշխատանքի մեջ լայնորեն ու համարձակորեն ներգրավել տաղանդավոր երիտասարդությանը:

Ժողովը սովետական բոլոր պատմաբաններին, ազգագրագետներին ու հնագետներին կոչ է անում իսկապես ուսումնասիրել և իմաստավորել ՍՄԿՊ XXII համագումարի նյութերի բովանդակած գաղափարների տեսական հարստությունը, ակտիվորեն օգնել Կոմունիստական պարտիային՝ լուծելու կոմունիզմի կառուցման խնդիրը:

1918--1920 թթ. Սիբիրի բոլշևիկյան ընդհատակի պատմությանն է նվիրված Մ. Ի. Ստիշովի հոդվածը, որտեղ բերված են այն պատճառները, որոնց շնորհիվ ներքին և արտաքին հակառևոլյուցիոն ուժերին հաջողվեց 1918 թ. ամռանը Սիբիրում տապալել նորաստեղծ Սովետական իշխանությունը: Նշված է, որ Սիբիրի բոլշևիկները հակառևոլյուցիայի դեմ իրենց պայքարը չդադարեցրին և հենց առաջին օրերից կազմակերպեցին պարտիական ընդհատակյա կազմակերպություններ:

Հոդվածում պատմված է Սիբիրի կոմունիստական առաջին ընդհատակյա շրջանային կոնֆերանսի հրավիրման և հետագայում նրա ունեցած նշանակության մասին: Այնուհետև նկարագրված են սպիտակգվարդիականների տիրապետության շրջանում Սիբիրի բանվորների ու գյուղացիների ծանր կացությունը և այն պատճառները, որոնց շնորհիվ Սիբիրի գյուղացիությունը երես բերեց բուրժուազիայից և կանգնեց բանվոր դասակարգի ու նրա ավանգարդի՝ Կոմունիստական պարտիայի հետ մերձեցման ուղու վրա, որի արդյունքը եղավ Սիբիրում Սովետական իշխանության համար մղվող պայքարի հաղթական ավարտը: Հոդվածում օգտագործված են արխիվային հարուստ նյութեր:

Լ. Վ. Զերեպինի «Ֆեոդալիզմի դարաշրջանի հայրենական պատմության պրոբլեմների ուսումնասիրությունը ՍՍՌՄ-ում» հոդվածում բազմակողմանիորեն քննված և վերլուծության են ենթարկված այդ հարցի վերաբերյալ լույս տեսած բազմաթիվ պատմագիտական աշխատությունները:

— Պատմաբանների ջանքերը նորագույն պատմության և սովետական հասարակության պատմության հարցերի վրա բևեռելը,— ասված է հոդվածի վերջում,— ամենևին չի նշանակում, թե պետք է թուլացնել սովետական պատմաբանների ուշադրությունը պատմության ավելի վաղ շրջանների հասարակական զարգացման պրոբլեմների նկատմամբ:

«Զեմբելնի՝ Մյունխենը» խորագրով հրապարակված են հատվածներ 1932—1943 թթ. Անգլիայում ՍՍՌՄ-ի դեսպան ակադեմիկոս Ի. Մ. Մայսկու հուշերից, որտեղ պատմված է, թե ինչպես է առաջացել մյունխենյան գործարքը և մերկացված են բուրժուական պատմագրության կողմից Մյունխենի մասին տարածված և տարածվող առասպելները:

Ամսագրում զետեղված է Ա. Ի. Պուշկաշի «Սոցիալիստական վերափոխությունը հունգարական գյուղատնտեսության մեջ (1948—1960 թթ.)» հոդվածը:

Вопросы истории КПСС

Բազմազան հարցեր են արծարծված «Վոպրոսի իստորիի ԿՊՍՍ» երկամյա հանդեսում զետեղված «ՍՍՌՄ-ում սոցիալիզմի կառուցման փորձի համաշխարհային պատմական նշանակությունը» խորագրով հոդվածում, որի հեղինակը է Ի. Ա. Գլադկովը:

Հակառակ բուրժուազիայի գաղափարախոսների, ռեֆորմիստների ու ռևիզիոնիստների ապարդյուն փորձերին, որոնց նպատակն է մի կերպ նսեմացնել Սովետական Միության փորձի նշանակությունը, հայտարարել, թե ռևոլյուցիոն մարքսիզմը իր հնացել է, և պատմության արդի փուլում սոցիալիզմը կարելի է կառուցել առանց ռևոլյուցիայի և պրոլետարիատի դիկտատուրայի, հոդվածագիրը մի շարք կոնկրետ օրինակներով ցույց է տալիս Հոկտեմբերյան ռևոլյուցիայի, Սովետական սոցիալիստական պետության և ՍՍՌՄ-ում սոցիալիզմի կառուցման փորձի համաշխարհային պատմական նշանակությունը:

Կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու հիմնական օրինաչափությունները, որոնք հայտնաբերեց մարքսիզմ-լենինիզմը և առաջին անգամ ստուգվեցին ՍՍՌՄ-ի փորձով, վերստին և նոր ձևով հաստատվեցին Եվրոպայի ու Ասիայի ժողովրդական դեմոկրատիայի երկրներում տեղի ունեցած սոցիալիստական ռևոլյուցիաների և այդ երկրներում սոցիալիզմի կառուցման պրակտիկայով: Ընդսմին, լիովին հաստատվում է Վ. Ի. Լենինի հանճարեղ կանխատեսությունը պրոլետարիատի դիկտատուրայի բազմազանության մասին: Ժողովրդական դեմոկրատիայի երկրները, ընթանալով Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հարթած ճանապարհով և օգտագործելով սոցիալիզմի կառուցման սովետական փորձը, սոցիալիստական ռևոլյուցիայի և սոցիալիզմի կառուցման ընդհանուր օրինաչափությունները կիրառում են, հաշվի առնելով իրենց երկրների կոնկրետ առանձնահատկությունները:

ՍՍՌՄ-ի պատմական փորձը առաջին անգամ գործնականորեն ապացուցեց, որ միայն սոցիալիզմն է վերջ տալիս մարդու կողմից մարդու

չահագործմանը, արտադրության անարխիային, տնտեսական ճգնաժամերին, գործազրկությանն ու մասսաների աղքատությանը, որ միայն սոցիալիզմն է ապահովում տնտեսության ու կուլտուրայի արագ վերելք, հանրային արտադրության պլանաչափ զարգացում, ժողովրդի նյութական ու կուլտուրական կենսամակարդակի անընդհատ բարձրացում: Այս ամենը ուժեղացնում է սոցիալիզմի ներգործությունը ոչ սոցիալիստական երկրների ժողովուրդների վրա, արագացնում ամբողջ մարդկության առաջընթաց զարգացումը:

«Վ. Ի. Լենինը և ՌՍԴԲՊ Պրագայի կոնֆերանսը» խորագրով Ս. Մ. Պետրովի և Վ. Յու. Կլիմուշևի հոդվածում վեր են հանված Սալինի անձի պաշտամունքի շրջանում Պրագայի կոնֆերանսի նշանակության խեղաթյուրումները, պատմական գրականության մեջ տարածված այն պնդումները, թե իբր բոլշևիկյան պարտիայի հիմքերը դրվել են հենց այդ կոնֆերանսում, թե իբր Համառուսաստանյան պարտիական կոնֆերանսի հրավիրման և պարտիայի Կենտկոմի վերստեղծման գաղափարը առաջ է քաշվել Ստալինի կողմից, պնդումներ, որոնք հակասում էին պատմական ճշմարտությանը, նսեմացնում էին բոլշևիզմի պատմական հարուստ փորձը, անտեսում Լենինի ուղղակի ցուցումները այդ մասին, որ բոլշևիզմը, որպես քաղաքական մտքի հոսանք և որպես քաղաքական պարտիա, գոյություն է ունեցել դեռևս 1903 թվականից:

Հոդվածում հանգամանորեն պատմվում է լիկվիդատորների դեմ Վ. Ի. Լենինի անհաշտ պայքարի, Պրագայի կոնֆերանսի նախապատրաստության գործում նրա հսկայական աշխատանքի մասին, նշված է կոնֆերանսի հրավիրման Ռուսաստանի կազմակերպական հանձնաժողովի անդամներ Օրջոնիկիձեի, Սպանդարյանի, Շահումյանի, Ստասովայի և ուրիշ ականավոր բոլշևիկների ակտիվ դերը Ռուսաստանի պարտիական կազմակերպությունների համախմբման ասպարեզում:

Զետեղված են նաև հետևյալ հոդվածները.

Ս. Պ. Տրապեզնիկով «Սոցիալիստական կոոպերացիան գյուղացիությանը կոմունիզմ տանող լենինյան ուղին է», Ն. Մ. Կիրյան «ՍՄԿՊ XXII համագումարը Սովետական Միության Զինված Ուժերի պաշտպանունակության ամրապնդման մասին», Ա. Ս. Զերնյան «Ժամանակակից ռևիզիոնիզմը Արևմտյան Եվրոպայի բանվորական շարժման մեջ»:

Հանդեսի «հաղորդումներ» բաժնում հոդվածներ են տպագրված կոլտնտեսությունների ամրապնդման ու երեսունհազարականների շարժման մասին և նախապատերազմյան տարիներին գյուղատնտեսական արտադրության զարգացման ուղղությամբ պարտիայի միջոցառումների մասին:

Առաջին անգամ ռուսերեն լեզվով հրապարակված են մի շարք հետաքրքիր փաստաթղթեր, որոնք մտնելու են ՍՄԿՊ Կենտկոմին առընթեր Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի կողմից հրատարակության պատրաստվող «Կոմունիստական ինտերնացիոնալը ըստ փաստաթղթերի. 1919—1943» ժողովածուի առաջին հատորի մեջ:

Այս համարում տպագրված են նաև կոնսուլտացիա ՍՄԿՊ-ի գործունեության ինտերնացիոնալ բնույթի մասին, պատմագրական տեսություն Լատինական Ամերիկայի երկրների կոմունիստական ու բանվորական շարժման պատմությանը վերաբերող գրականության մասին, անոտացիաներ, ՍՄԿՊ-ի պատմության և միջազգային կոմունիստական ու բանվորական շարժման պատմության վերաբերյալ 1961 թ. սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին հանդեսներում և գիտական ժողովածուներում տպագրված փաստաթղթերի ու հոդվածների ցուցակ և այլ նյութեր:

Վ. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ